

ԱԶԳԱՅԻՆ ԼԵԶՈՒԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Ա. Բ Ա Ն Զ Ա Ր

Մեր բառը բանջար = բոյս , խոտ , դալարի = erba, erbaggio, erbame, ortaggio , մի եւ նոյն արմատն ունի բան-ա-ւ = հնդեւր. *bhā-nā-mi (յուն. φαίνω [*φαι-ւաէն]) = aprirsi = բացուիլ. «բացուիլ» բառի հետ «բացուող , ծաղկող» նշանակութեամբ :

Հայերէն -ար վերջաւորութիւնն ունին նաեւ ուրիշ լաւ ծանօթ բուն հայերէն բառեր զ. օ. արդ-ար = giusto , retto , սանսկր. rtá- = die heilige Ordnung; das Rechte, Wahre, rtávan- = heilig, fromm, ավեստ. asha , ashavan , հին պարսկ. arta- (Արսահշաքրա-ի մէջ) Hübschmann , Armenische Grammatik I, 423 ու հետեւ. : Այսպէս նաեւ դար-ար , դար-ար-ի , յուն. θαλαρός = blühend, frisch, kräftig, θαλλω = blühe, strotze, θαλλός = Zweig, Laub , θάλλος = Sprössling. (Տե՛ս Հիւրչման նշանաւոր հայագիտի յիշեալ անուանի գործը , էջ 438) :

Գիտնալու է , որ բանջ-ար իրեն -ար վերջաւորութիւնը բնաւ այս դար-ար բառէն ընդունեց վասն իրեն նման նշանակութեան :

Ես կը հետեւցընեմ դեռ , որ նախահայերէն լեզուիս մէջ մենք *բան-ջ բառ մը ունէինք « բան-ջ-ար » նշանակութեամբ , եւ այս բան-ջ բառը , ինչպէս ջին-ջ , ածական էր հայ. -ջ վերջաւորութեամբ :

Ինչպէս Kuhn'ի «Zeitschrift für vergleichende Sprachforschung auf dem Gebiete der indogermanischen Sprachen» հատ. 37 , էջ 427 ու հետեւ. մէջ ես ցոյց տուել եմ , այս ջինջ , ջնջեւ [*ջին-ջ-ե-ւ] = յուն. θείνω (*θεν-ւա) առանց -ջ վերջաւորութեան ալ ունինք՝ ջին , ջնեւ [*ջին-ե-ւ] բուն հայերէն բառի մէջ :

Ուրեմն *բան-ջ ալ՝ իբր ածական՝ յուն. *φαίνος ձեւին կը համեմատի , բան-ջ-ար = «բացուող , ծաղկող» նշանակութեամբ , ինչպէս ջին-ջ = յուն. *θείνος է :

Budapest.

ՂՈՒԿԱՍ ԲԱԴՐՈՒՊԱՆԵԱՆ ԱՆԵՑԻ

